ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Լ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան.

Ի պատասխան Ձեր 17.06.2019թ. հ.01/285 գրության՝ տեղեկացվում է, որ մայրաքաղաքի Սիլիկյան թաղամասն սպասարկող ավտոբուսային հ.18 և միկրոավտոբուսային հ.27, հ.36 երթուղիները, առանձին տրանսպորտային միջոցների անսարքությունների և, հիմնականում, անհրաժեշտ թվով վարորդների բացակայության պատճառով, ներկայումս շահագործվում են սահմանվածից քիչ շարժակազմերով, ինչի արդյունքում մեծանում են շարժման միջակայքերը՝ որոշակի անհարմարություններ ստեղծելով երթուղիներից օգտվող ուղևորների համար:

Միաժամանակ տեղեկացվում է, որ հանձնարարվել է վերը նշված երթուղիներն սպասարկող կազմակերպություններին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վարորդական անձնակազմերը համալրելու, երթուղիներ դուրս բերվող շարժակազմերի քանակներն ավելացնելու և ուղևորների սպասարկման վիճակը բարելավելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ